ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

-- մարտի 2021 թվականի №---Ա

ք.Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 14-Ի №303Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին կետը, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասը, 33-րդ և 34-րդ հոդվածները, Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2013 թվականի նոյեմբերի 1-ի №374Ն որոշմամբ հաստատված՝ էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգը և հաշվի առնելով «ԷՅՉ ԷՅՉ ԴԻ ՍՈԼԱՐ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 2021 թվականի փետրվարի 19-ի գրությունը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2019 թվականի օգոստոսի 14-ի «ԷՅՉ ԷՅՉ ԴԻ ՍՈԼԱՐ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը «Պարտիզակ-1» արևային էլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիա տրամադրելու մասին» №303Ա որոշման 2-րդ կետով հաստատված հավելվածի՝

   1) 6-րդ կետում «4999,75» թիվը փոխարինել «4999» թվով,

   2) 9-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

   «9. Կայանի փաստացի տեղակայված (դրվածքային) հզորությունը 4999 կՎտ է:»:

2. «Արդշինբանկ» փակ բաժնետիրական ընկերությանն ամբողջությամբ ազատել 2019 թվականի հուլիսի 19-ի №652-10619 գրությամբ ներկայացված և 2020 թվականի փետրվարի 5-ի №652-1106 գրությամբ գործողության ժամկետը երկարաձգված №ՀԲԵՆ19/105-01 երաշխիքի համաձայն Հայաստանի Հանրապետության

հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի առջև ստանձնած 12 500 000 (տասներկու միլիոն հինգ հարյուր հազար) դրամ գումարի երաշխիքային պարտավորությունից:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2021 թվականի մարտի 4-ից, իսկ 1-ին կետի գործողությունը տարածվում է 2021 թվականի փետրվարի 28-ից ծագած հարաբերությունների վրա:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ

ք. Երևան
-- մարտի 2021թ.